

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 9

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի առցանց նիստի

ք.Երևան

11 մայիսի 2020թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը:

Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սաղյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԿԳ-2020» միջազգային մրցույթին մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադայանի կողմից ներկայացվող հայտի երաշխավորման հարցը:
2. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ՀՀ գիտության կոմիտեի և և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության «ՀՀ ԿԳՄՄՆ ԿԳ-2020» միջազգային մրցույթին

մասնակցելու և ֆինանսավորում ստանալու համար Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադայանի կողմից ներկայացվող հայտի երաշխավորման հարցը:

Լսեցին՝ Գիտական խորհրդի քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ թեմատիկ ֆինանսավորման նպատակով Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնից ներկայացվել է 1 հայտ կ.գ.դ. պրոֆեսոր Ս. Բադայանի կողմից, որն անհրաժեշտ է երաշխավորել ՀՀ գիտության կոմիտեի և Հիմնարար հետազոտությունների ռուսաստանյան հիմնադրամի կողմից անցկացվող գիտական հետազոտությունների համատեղ ծրագրերի աջակցության միջազգային մրցույթին մասնակցելու համար:

Ելույթ ունեցավ կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ ք.գ.դ. Ռուբեն Հովհաննեսյանը, ով տեղեկացրեց, որ հայտը քննարկվել է ամբիոնում և երաշխավորվել մրցույթին մասնակցելու համար: ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի «Կենսաբժշկագիտության» ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Սուսաննա Բադայանը համառոտ ներկայացրեց «Աբեթասնկերի տարբեր հավաքածուների կենսաբանական և էկոլոգիական բնութագրերը և մոլեկուլային շտրիխ-կոդերի համակարգի ստեղծումը» վերնագրով թեմայի շրջանակներում նախատեսվող աշխատանքները: Ս. Բադայանը նշեց, որ հայտն ուղղված է Հայաստանի և Ռուսաստանի եվրոպական ու ասիական, տարածքներում որոշ ծառաբանակաբեթասնկերի (բաժին Basidiomycota, դաս Agaricomycetes) կենսաբանական և էկոլոգիական բնութագրիչների, կենսաակտիվ միացությունների և դեղաբանական հատկությունների ուսումնասիրմանը, գենետիկորեն նույնականացված մաքուր կուլտուրաների հավաքածուի մոլեկուլային շտրիխ-կոդերի համակարգի մշակմանը՝ նրանց ռեսուրսային ներուժի գնահատման, պահպանման, կենսատեխնոլոգիայում և կենսաբժշկության մեջ հետագա կիրառման նպատակով:

Որոշեցին՝ (միաձայն) երաշխավորել կ.գ.դ. Սուսաննա Բադայանի կողմից ներկայացված հայտը:

3. Ընթացիկ հարցեր:

Ընթացիկ հարցերի շարքում քննարկվեցին Ֆարմացիայի ինստիտուտի երեք ամբիոններում ավարտական աշխատանքների առցանց նախապաշտպանությունների կազմակերպման հետ կապված հարցեր: Ամբիոնների վարիչները հաղորդեցին, որ հիմնական տեխնիկական դժվարություններն արդեն հաղթահարված են և ուսանողները պատրաստ են առցանց եղանակով լիարժեք ներկայացնելու իրենց աշխատանքները:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սաղյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան